ԳԷՈՐԳ Զ. ՉՈՐԷՔՉԵԱՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ Չորէքչեանը ծնուել է 1869թ. դեկտեմբերի 2-ին Ռուսաստանի Նոր Նախիջեւան քաղաքում: Սկզբնական կրթութիւնը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետեւ քաղաքի հոգեւոր սեմինարիայում:

1879թ. Նոր Նախիջեւանի քաղաքապետարանի միջնորդութեամբ դասնամեայ Գէորգ Չորէքչեանը դառնում է Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի սան եւ ուսումն աւարտում է 1889թ: Նոյն թուականի յունիսի 18-ին Կարապետ Տէր- Մկրտչեանի եւ Գարեգին Յովսէփեանի հետ ձեռնադրում է սարկաւագ եւ վերոնշեալ անձանց հետ Մակար Ա. Կաթողիկոսի հրամանով մեկնում Գերմանիա՝ բարձրագոյն ուսում ստանալու: Գէորգ սարկաւագ Չորէքչեանը Գերմանիայում ուսանում է Լայպցիգի համալսարանում եւ երաժշտանոցում:

1984թ. ուսումն աւարտելուց յետոյ վերադառնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ նշանակւում Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ: Հազիւ մէկ տարի մնալով Ս. Էջմիածնում՝ Կաթողիկոսի հրամանով մեկնում է հայրենի քաղաք:

1913թ. Գէորգ Ե. Կաթողիկոսի հրամանով նա վերադառնում է Մայր Աթոռ եւ ձեռնադրւում կուսակրօն քահանայ: Ձեռնադրութիւնից յետոյ արդեն առաջնորդական տեղապահի պաշտօնով կրկին վերադառնում է Նոր Նախիջեւան: Շուտով ստանում է վարդապետական աստիճան:

1916թ. Գէորգ վարդապետն այս անգամ արդեն մնայուն՝ վերադառնում է Ս. Էջմիածին՝ արժանանում ծայրագոյն վարդապետի աստիճանի եւ նշանակւում Սինոդի անդամ:

1917թ. ձեռնադրւում է եպիսկոպոս, նշանակւում Մայր Աթոռի վանական կառաւարութեան նախագահ եւ լուսարարապետ:

1922թ. նշանակւում է Վիրահայոց թեմի առաջնորդ եւ մնում այդ պաշտօնին մինչեւ 1927թ:

1925թ. Գէորգ եպիսկոպոսին շնորհւում է արքութեան պատիւ:

Խորէն Ա. Մուրադբեկեան Կաթողիկոսի եղերական մահից յետոյ 1938թ. ապրիլի 10-ից ստանձնում է Հայոց Եկեղեցու գործերի ղեկավարութիւնը:

1941թ. ապրիլին Ազգային Եկեղեցական ժողովում ընտրւում է կաթողիկոսական տեղապահ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայութեան շրջանում կազմակերպել է հանգանակութիւն «Սասունցի Դաւիթ» եւ «Գեներալ Բաղրամեան» տանկային շարասիների ստեղծման յամար:

Լայպցիգի Համալսարանը

1944թ. նրա ջանքերի շնորհիւ սկսում է հրատարակուել «Էջմիածին» ամսագիրը:

1945թ. ապրիլի 19-ին ազգընտիր տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը հանդիպում է ունենում ԽՍՀՄ –ի ղեկավար Իոսիֆ Սալինի հետ, որի ընթացքում բարձրացնում է հայ ժողովրդին հուզող բազում հարցեր:

1945թ. յունիսի 16-22-ը Մայր Աթոռում հրաւիրում է Ազգային-եկեղեցական ժողով, որտեղ կաթողիկոսական ազգընտիր տեղապահ Գէորգ արքեպիսկոպոս Չորէքչեանն ընտրում է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

1945թ. հոյեմբերի 1-ին Գէորգ Զ. Հայրապետի անմիջական ջանքերի շնորհիւ վերաբացւում է Գէորգեան Հոգեւոր Ճեմարանը:

1954թ մայիսի 9-ին 86 ամեայ հասակում ի Տէր հանգաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ. Չորէքչեանը:

Հ. ա. Ե.